DOI: 10.54503/1829-4324.2023.1-216

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳՐԱՎԱԿԱՆ

Շողեր Պյոտրի Պողոսյան

Հոդվածը ստացվել է՝ 06.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 14.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Յուրաքանչյուր երկրի համար տնտեսական աճը կարևոր նպատակ է, քանի որ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային արդյունքի ավելացումը բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևոր նախապայմանն է:

Համաշխարհային տնտեսությունը շարունակում է զարգանալ զգալի անորոշության պայմաններում, ինչն իր հետքն է թողնում Հայաստանի հետագա զարգացումների վրա: Լինելով փոքր և բաց տնտեսություն, Հայաստանը արագ է արձագանքում գործընկեր երկրներից եկող ազդակներին: Դեռևս ոչ լիովին վերականգնելով իր տնտեսական ներուժը արցախյան պատերազմից հետո, Հայաստանը ենթարկվեց մեկ այլ արտաքին ցնցման. Ռուս-ուկրաինական հակամարտությունը մեծ ազդեցություն ունեցավ հիմնական գործընկեր՝ Ռուսաստանի վրա: Արդյունքում, երկրի տնտեսական իրավիճակը նոր բնույթ ստացավ. Պատերազմը պատճառ դարձավ զգալի դրամական ներհոսքի՝ շնորհիվ միգրանտների: Նշված տնտեսական միտումներով և տարածաշրջանային ռիսկերով (ՌԴ-ի տնտեսական անկումը և կանխատեսելի դանդաղ վերականգնման սպասումները) պայմանավորված արտարժույթի ներհոսքը դեպի հանրապետություն աճեց՝ նպաստելով ծառայությունների և սպասարկման ոլորտի ծավալների ավելացմանը, ինչպես նաև անշարժ գույքի տնօրինումից ՀՀ բնակչության ստացված եկամուտների աճին և ՀՀ տնտեսական աճի տեմպի արագացմանը՝ 2022 թվականին կազմելով մոտ 13%[1]: ՀՀ-ում տնտեսական աճն ունի յուրահատուկ գծեր, մասնավորապես երկրի տարածքային անհամաչափ զարգացումը, երկարաժամկետ ներդրումների պակասը, արտագաղթը և իր հերթին նաև վերջին շրջանում միգրանտների ներհոսքը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության արդիականությունը:**

Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել միգրացիոն հոսքերը՝ տնտեսական աճի, ինչպես նաև համայնքների համաչափ զարգացման տեսանկյունից:

Հետազոտության **խնդիրն է** ուսումնասիրել միգրացիայի ազդեցությունը ներառական տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, միգրացիոն հոսքերի արդյունավետ կառավարումը, վերլուծումը և համեմատումը, որն էական նշանակություն ունի տարածքների համաչափ զարգացմամբ պայմանավորված միգրանտների հոսքը արդյունավետ կառավարելու տեսանկյունից:

[1] https://ejc.am/hy/article/6957

Գրականության վերլուծություն: Երկրների տնտեսական հաջողությունները տարբեր են՝ իրենց տարբեր հաստատությունների, տնտեսական կյանքի վրա ազդող օրենքների և մարդկանց շահագրգռող խթանների պատճառով[1]:

Տնտեսական աճի կայունությունը, ի թիվս այլ գործոնների, ներառում է անհավասարության ցածր մակարդակն իր տարբեր դրսևորումներով: Զարգացած հասարակություններում կայունության հիմքը միջին խավն է: Համաձայն Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումի «Պարգևատրել աշխատանքի, այլ ոչ թե հարստության» զեկույցի, 2017 թվականին ստեղծված համաշխարհային հարստության 82%-ը պատկանում է բնակչության 1%-ին, մինչդեռ աշխարհի բնակչության կեսը (3,7 մլրդ) չի բարելավվել նրանց բարեկեցությունը[2]:

Խելացի, կայուն և ներառական աճի հայեցակարգը ձևակերպվել է 2010 թվականին ԵՄ-2020 Լիսաբոնի ռազմավարության նախագծի երրորդ տարբերակում[3]: Նույն տարում Աճի և զարգացման հանձնաժողովը հրապարակեց «Աճի զեկույց. Կայուն աճի և ներառական զարգացման ռազմավարություններ»: Ըստ Մ.Սփենսի, կայուն աճն ինքնանպատակ չէ, սակայն այն կարող է ապահովել աղքատության կրճատում, զբաղվածություն, կրթություն, առողջապահություն և ստեղծագործական հնարավորություններ[4]:

Նոր հայեցակարգում «մարդկային զարգացումը» բարձրացրել է իր կարգավիճակը և ընդլայնել զարգացման նպատակների շրջանակը: Որպես ինքնուրույն ուղղություն առանձնանալով սոցիալական բաղադրիչը կոչվում էր ներառական, կամ համապարփակ աճ (ներառական աճ), որի հիմքում ընկած է կենսամակարդակի բարձրացումը, սոցիալական և տարածքային համախմբվածությունը:

Ներկայումս աշխարհում կա մոտ 1,3 միլիարդ երիտասարդ, որոնցից 267 միլիոնը դասակարգվում է որպես զբաղվածության, կրթության կամ վերապատրաստման մեջ չգտնվող (NEET): ԱՄԿ Զբաղվածության և աշխատաշուկայի վարչության բաժնի ղեկավար Ս. Դասգուպտայի կարծիքով երիտասարդների համար բավարար աշխատատեղեր չեն ստեղծվում, ինչը նշանակում է, որ միլիոնավոր ներուժը պատշաճ կերպով չի օգտագործվում, իսկ եթե ցանկանում ենք դիմակայել տեխնոլոգիայի, կլիմայի փոփոխության, անհավասարության և ժողովրդագրության հետ կապված մարտահրավերներին, ապա անհրաժեշտ են ինտեգրված քաղաքականության շրջանակներ և պատասխանատու վերապատրաստման հա-

---

[1] Աճեմօղլու Տ., Ռոբինսոն Ջ., Ինչու են ձախողվում պետությունները, Երևան, Անտարես, 2018, 688էջ, էջ 112

[2] Dubovik M. V., Model of smart, sustainable, inclusive economic growth in the context of inequality in Russia, International Journal of Civil Engineering and Technology (IJCIET), Volume 10, Issue 2, February 2019, pp. 1704–1711, Article ID: IJCIET_10_02_164
http://www.iaeme.com/ijciet/issues.asp?JType=IJCIET&VType=10&IType=2 ISSN 0976-6308

[3] Europe 2020 Strategy for smart, sustainable, and inclusivegrowth. https://ec.europa.eu/digital-agenda/en/news/europe-2020-strategy-smart-sustainable-and-inclusive-growth.

[4] Курушина Е. В., «Умный» рост: институциональные и ментальные трансформации, Экономика и управление .N 5 (103) 2014, стр.33

մակարգեր, որոնք մշակված են կառավարությունների, աշխատողների և գործատուների միջև երկխոսության միջոցով»[1]:

Մեթոդաբանություն: Հետազոտության իրականացման համար հիմք են հանդիսացել միջազգային զեկույցների հրապարակումները, փորձագետների՝ ոլորտին առնչվող հետազոտությունները, ինչպես նաև վիճակագրական, համեմատական,վերլուծական և համադրման մեթոդների օգտագործումը:

Վերլուծություն: Միգրացիան պայմանավորված է, առաջին հերթին, սեփական երկրում տնտեսական հնարավորությունների բացակայությամբ: Բարձր եկամուտ ունեցող երկրներում միջին եկամուտների մակարդակը ավելի քան 70 անգամ ավելի բարձր է, քան ցածր եկամուտ ունեցող երկրներում, զարմանալի չէ, որ զարգացող աշխարհում շատերը ստիպված են իրենց բախտը փորձել այլուր[2]:

Այս միտումը ամրապնդվում է ժողովրդագրական տեղաշարժերով: Քանի որ բարձր եկամուտ ունեցող երկրները բախվում են բնակչության ծերացմանը, ցածր եկամուտ ունեցող շատ երկրներում աճում է աշխատունակ և երիտասարդ բնակչությունը: Տեխնոլոգիական խաթարումը ճնշում է գործադրում նաև աշխատաշուկաների վրա: Ավելին, կլիմայի փոփոխությունը, ինչպես նշված է Համաշխարհային բանկի վերջին զեկույցում, կարագացնի միտումը՝ մոտ 140 միլիոն մարդու մոտակա տասնամյակների ընթացքում դուրս մղելով իրենց տներից[3]: Սակայն, հակառակ տարածված կարծիքի, միգրանտների գրեթե կեսը զարգացող երկրներից չի տեղափոխվում զարգացած երկրներ: Ավելի շուտ, նրանք գաղթում են զարգացող երկրների միջև, հաճախ նույն հարևանությամբ: Հետաքրքիր հետազոտություն են իրականացրել Ֆ.Ֆուրլանետոն և Օ.Ռոբստադը: Նրանք գնահատում են ներգաղթի ազդեցությունը Նորվեգիայի տնտեսության վրա՝ օգտագործելով 1990-2014 թվականների եռամսյակային տվյալները[4]: Պարզվել է, որ ներգաղթի ցնցումը մեծացնում է ընդհանուր համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), նվազեցնում իրական աշխատավարձերը, գործազրկությունը և արտադրողականությունը և չի ազդում բնակարանների գների և տնային տնտեսությունների վարկի վրա[5]: Ներգաղթի շոկի ազդեցությունը գների վրա պարզ չէ: Հետազոտության հիմնական արդյունքներից մեկն այն է, որ ներգաղթը Նորվեգիայի գործազրկության վրա ազդող կարևոր գործոն է (>50%) ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Ինչ վերաբերում է միգրանտների կողմից բնակարանային գների փոփոխության ազդեցությանը մեր երկրում էապես մեծ է: Ներկայիս մեր խնդրին է միգրացիոն ներհոսքը օգտագործելով թեկուզ ժամանակավոր ծառայեցնել համայնքային, տարածքային համաչափ զարգացմանը: Այս ներհոսքի

---

[1] https://www.ilo.org/global/about-the-ilo/newsroom/news/WCMS_737053/lang--en/index.htm

[2] https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---europe/---ro-geneva/---sro-moscow/documents/publication/wcms_807292.pdf

[3] Migration can support economic development if we let it. Here's how, https://www.weforum.org/agenda/2019/03/migration-myths-vs-economic-facts

[4] Furlanetto F., Robstad O. (2016), Immigration and the macroeconomy: some new empirical evidence. Working Paper. Norges Bank, N. 18., 39p.

[5] http://www.cbr.ru/statichtml/file/131869/wp_khab_dec.pdf

արդյունավետ կառավարումը կնպաստի որպեսզի ձևավորենք ֆրիլանս տնտեսություն: Նման ներհոսք, սակայն ավելի քիչ մասշտաբով նկատվեց նաև նախորդ տարիներին, ինչպես նաև համավարակի ընթացքում, երբ Հայաստանը աշխարհի 175 երկրի շարքում 1000 բնակչին ընկնող ֆրիլանսերների քանակով հայտնվեց 4 հորիզոնականում, միաժամանակ, առաջինը՝ ըստ գրանցված ակտիվ ֆրիլանսերների տեսակարար կշռի (26,85%)[1]: Սա նպաստեց նաև ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով միգրանտների ներհոսքին՝ Հայաստան, քանի որ մի մասը արդեն տեղյակ էր մեր երկրի տնտեսական կարգավորումներին: Մի շարք երկրներում այս ցուցանիշն ավելի բարձր է, օրինակ՝ Չադում՝ 66,67%, սակայն դա ստացվել է 2 ակտիվ և 3 գրանցված ֆրիլանսերների թվաքանակների հարաբերությամբ, ինչն անհամեմատելի է Հայաստանի 1698 ակտիվ ֆրիլանսերների թվաքանակի հետ (ՀՀ-ում գրանցվածների թիվն ընդամենը 6325 է): Նկատենք նաև, որ ֆրիլանսերների իրական թիվն է՛լ ավելի մեծ է, քանի որ ոչ բոլորն են գրանցված ֆրիլանս կայքերում[2]: Ֆ.Ֆուրլանետոն պարզել է, որ ներգաղթյալների ներհոսքի 1 տոկոսային կետով աճը ընդհանուր զբաղվածության համեմատ ավելացնում է արտադրանքը գրեթե 1 տոկոսով հինգերորդ տարում[3]: Դա պայմանավորված է նրանով, որ հայրենի և ներգաղթյալ աշխատողներն աշխատաշուկա են բերում տարբեր հմտություններ, որոնք լրացնում են միմյանց և բարձրացնում արտադրողականությունը: Հետազոտությունները նաև ցույց են տվել, որ նույնիսկ համեստ արտադրողականության աճը ներգաղթից նպաստում է բնիկների միջին եկամուտին: 1996-2014 թվականների միջերկրային, պանելային տվյալների արդյունքները ցույց են տվել, որ միգրացիան իր հերթին անուղղակիորեն կարող է նվազեցնել տնտեսական աճը քաղաքական անկայունության աճի միջոցով[4]:

Փերին և Սպարբերը ցույց են տալիս, որ ներգաղթյալների մեծ հոսք ունեցող շրջաններում ցածր կրթությամբ բնիկները հակված են մասնագիտանալու հաղորդակցության ինտենսիվ առաջադրանքների մեջ՝ ավելի շատ ձեռքով ինտենսիվ առաջադրանք թողնելով ներգաղթյալներին[5]: Վերահավասարակշռումը առաջացնում է աշխատանքի մասնագիտացում՝ հիմնված համեմատական առավելությունների վրա և հանգեցնում է արդյունավետության բարձրացման:

---

[1] Հովհաննիսյան Ա., Հայաստանը՝ 4-րդ հորիզոնականում. ապագա աշխատաոճի ներկան, 2019/1. ԱՄԲԵՐԴ տեղեկագիր, էջ 66

[2] Հովհաննիսյան Ա., Հայաստանը՝ 4-րդ հորիզոնականում. ապագա աշխատաոճի ներկան, 2019/1. ԱՄԲԵՐԴ տեղեկագիր, էջ 64-66

[3] Based on Chapter 4 of the World Economic Outlook, "The Macroeconomic Effects of Global Migration," by Philipp Engler, Keiko Honjo, Margaux MacDonald, Roberto Piazza (team leader) and Galen Sher, under the guidance of Florence Jaumotte. https://www.imf.org/en/Blogs/Articles/2020/06/19/blog-weo-chapter4-migration-to-advanced-economies-can-raise-growth

[4] David L. Ortmeyer, Michael A. Quinn, Generating Economic Growth in Countries with Migration and Fractionalization, Business and Economics Research Journal, 11/2020, pp. 1-14 **ISSN:** 2619-9491

[5] https://www.norgesbank.no/contentassets/f8b842e9e126460199a34e0434a2f627/working_paper_18_16.pdf?v=03/09/2017123455&ft=.pdf&v=03/09/2017123455&ft=.pdf

2022թ. ընթացքում ՀՀ ժամանած միգրանտների ներհոսքը պայմանական բաժանենք երկու խմբի՝

1. գարնան ժամանածներ՝ պայմանավորված ռուս ուկրաինական հակամարտության հետևանքով առաջացած սահմանափակումներով, (հիմնականում բանկային համակարգի սահմանափակումներով պայմանավորված),

2. աշնան ժամանածներ՝ պայմանավորված ՌԴ-ում հայտարարված մոբիլիզացիայով (հիմնականում հրաժարվելով պատերազմական գործողություններին ներգրավվելը)։

Գարնան ժամանածներին վերագրենք «վճարունակ» միգրանտներ՝ հիմնականում բարձր որակավորմամբ հմտություններ ունեցող, իսկ աշնան ժամանածներին «մասամբ վճարունակ» կամ «խառը» միգրանտներ՝ հիմնականում միջին որակական հմտություններով օժտված անձինք։

Քանի որ ՀՀ միգրանտների առաջին ալիքը հիմնականում տեխնոլոգիական հմտություններով օժտված անձիք են և ունակ են նոր շունչ հաղորդել SS ոլորտին, ուստի նրանք են տեղացիներին հաղորդակցության ինտենսիվ ձևեր թելադրողը և այս պարագայում հնարավորինս արագ հմտությունների կլանումը կօգնի արդյունավետության բարձրացմանը։ Ըստ տնտեսագետ Սուրեն Պարսյանի 2022թ. ընթացքում SS ոլորտի մոտ հինգ հազար ռուսական և բելառուսական ընկերություններ են բացվել ՀՀ-ում։

Տնտեսագետները ենթադրում են, որ միգրացիոն հոսքերը պայմանավորված են աշխատավարձերի և կենսամակարդակի տարբերություններով։ Նրանց համար միգրացիան առաջին հերթին աշխատաշուկայի գործունեության տարր է, ինչպես նաև մարդկային կապիտալի կուտակման ձև։

Տնտեսական աճի առումով միգրացիան[1]

- խթանում է աշխատունակ բնակչության թիվը,
- միգրանտները ժամանում են հմտություններով և նպաստում ընդունող երկրների մարդկային կապիտալի զարգացմանը,
- միգրանտները նպաստում են տեխնոլոգիական առաջընթացին։

Ընդունված է, որ միգրանտները «փակված» են նեղ հատվածներում, և նրանց կենտրոնացումը հանգեցնում է աշխատուժի ավելցուկային առաջարկի և, համապատասխանաբար, այդ ոլորտներում աշխատավարձերի նվազման[2]։ Ապա նման միտում վերջին զարգացումներով պայմանավորված, առավել քիչ է արտահայտված մեզ մոտ՝ որպես ընդունող երկիր։ Քանի որ մեր երկիր միգրանտների ներհոսքը ավելի բարձր կենսամակարդակ ունեցող երկրներից է եղել, ուստի ՀՀ այս իրավիճակում եղել է շահեկան վիճակում այն առումով, որ հիմնականում տարեսկզբին առաջին ալիքը միգրանտների ներհոսքի իր հետ բերեց որակավորված աշխատուժ և, ինչպես նշեցինք «վճարունակ» միգրանտներ։ Ինչն առաջին հերթին դրսևորվեց ծառայությունների ոլորտի կտրուկ աճով։ Բայց ծառայությունների ոլորտի աճը իր հերթին խաթարում է արդյունաբերության զարգացմանը։

[1] https://www.oecd.org/migration/OECD%20Migration%20Policy%20Debates%20Numero%202.pdf

[2] https://www.hse.ru/news/science/69297044.html

Դեռևս 2016թ Համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ ՀՀ ընդգրկվեց այն հնգյակ երկրների շարքում, որոնց քաղաքացիների շուրջ 20%-ից ավելին բնակվում է արտերկրում (գծապատկեր 1)։ Այդ թվականին ՀՀ միգրացիոն սալդոն կազմել է -48170 մարդ[1]։



Գծապատկեր 1. **Երկրներ, որոնց քաղաքացիների շուրջ 20%-ից ավելին բնակվում է արտերկրում[2]**

Դեպի Հայաստան մարդկային հոսքը 2022թ առաջին կիսամյակում էական-որեն փոխել է հանրապետության ընդհանուր սահմանահատումների պատկերը։ Եթե նախորդ տարվա առաջին կիսամյակում ընդհանուր մուտքերն ու ելքերը հանգեցրել էին բացասական արդյունքի՝ մինուս 52 հազար, նախորդ տարվա առաջին վեց ամիսներին այդ թիվը կազմել է պլյուս 16 հազար, իսկ տարեվերջը մոտեցել է 29 հազար[3]։

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով, 2020 թվականի համախառն ներքին արդյունքի մոտավորապես 60%-ը բաժին է ընկել Երևանին։ Ընդ որում, վերջին 3 տարվա դինամիկան ցույց է տալիս, որ մայրաքաղաքի կշիռը տնտեսության մեջ աճել է։ Սա հավաստում է տարածքային համաչափ զարգացման խնդիրի արդիական լինելու հանգամանքը։

Աղյուսակ 1

ՀՀ Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը ըստ տարածաշրջանների (%)

Մարզեր	*2018 (%)*	*2019 (%)*	*2020 (%)*
Երևան	54.1	58.4	59.9
Արագածոտն	3.2	2.5	2.4
Արարատ	7.0	6.9	6.8
Արմավիր	6.3	5.9	5.6

[1]https://migration.am/content/pdf/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.2016.arm.pdf

[2] “At least one-fifth of people from these countries lives abroad”. World Economic Forum 2016, https://www.weforum.org/agenda/2016/12/fifth-of-people-from-these-countries-live-abroad/

[3] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ. հունվար-նոյեմբեր, էջ 152

Գեղարքունիք	3.9	3.6	3.2
Լոռի	4.1	3.5	3.4
Կոտայք	6.8	6.3	6.6
Շիրակ	4.6	4.1	3.4
Սյունիք	6.4	5.7	5.7
Վայոց Ձոր	1.3	1.1	1.1
Տավուշ	2.3	2.0	1.9
ՀՀ	**100**	**100**	**100**

Տարածքային անհամաչափությունները սկսել են խորանալ և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաքի տնտեսական դերի և նշանակության աճով, ինչի արդյունքում գնալով ավելի է աճում Երևանի և մարզերի միջև կենսամակարդակի ճեղքվածքը: Ներկայումս տնտեսական կառուցվածքում առաջատար դիրքում են ծառայությունների ոլորտը, առևտուրը, շինարարությունը, արդյունաբերությունը[1]:

Համաշխարհային բանկը 2023թ հունվարին հրապարակել է «Գլոբալ տնտեսական հեռանկարներ» զեկույցը ըստ որի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում 2022-ի արդյունքում ամենաբարձր տնտեսական աճը կանխատեսել է Հայաստանի համար՝ 10.8%: Սակայն 2023թ-ին Համաշխարհային բանկի կանխատեսմամբ՝ Հայաստանի ՀՆԱ աճը կկազմի 4,1%, իսկ 2024-ին՝ 4,8 %[2]: Տնտեսական աճի տեմպերը կախված են երկրի արտադրական կարողությունների զարգացման և ընդլայնման մեջ ներդրումներից, բավարար ուշադրություն դարձնելով մարդկային ռեսուրսների զարգացմանը և տնտեսության նոր ճյուղերի ստեղծմանը:

Մեկ երկրի յուրաքանչյուր բնակիչ իր գործողություններով ազդում է տնտեսական աճի և երկրի ՀՆԱ-ի վերջնական ծավալների վրա:

Գիտական նորույթ: Ներառական տնտեսական աճի ապահովման նպատակով բացահայտվել է միգրացիոն գործընթացների փոփոխությունները, հիմնավորվել միգրացիոն գործընթացների կառավարման արդի մեխանիզմների, ինտեգրացիոն քաղաքականության ներդրումը:

Հիմնավորվել է տնտեսական աճի ապահովման գործում ՀՀ մարզերի մասնակցությունը՝ հիմքում դնելով մարզերի սոցիալական աջակցությունից անցում տնտեսական ներդրման մոդելի՝ միաժամանակ միգրացիոն գործընթացները ծառայեցնելով տնտեսության զարգացմանը:

Եզրակացություն: Հարկադիր միգրանտները հաճախ ուղղակիորեն ազդում են աշխատաշուկայի վրա, քանի որ մեծացնում են աշխատուժի առաջարկը: Բացի այդ ազդեցությունը կախված է թե որտեղ են նրանք տեղակայվում ընդունող երկրում՝ քաղաքային թե գյուղական վայրերում: Տարածքների համաչափ

[1] https://armstat.am/file/doc/99535788.pdf

[2] Global Economic Prospects, JANUARY 2023, 2023 International Bank for Reconstruction and Development / The World Bank, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/38030/GEP-January-2023.pdf

զարգացման առումով անհրաժեշտ է, որ ընդունող երկիրը նրանց տեղակայի գյուղական համայնքներում:

Ինչպես արդեն նշեցինք, քանի որ սովորաբար միգրանտները հիմնականում աշխատանք են գտնում ցածր որակավորում պահանջող ոլորտներում, իսկ ՀՀ մարզերում գերակշռողը գյուղատնտեսական սեզոնային աշխատանքներն են, ուստի այս առումով ցածր որակավորում ունեցող միգրանտներին տեղակայելը մարզերում ավելի արդյունավետ կլինի:

Նախ՝ միգրանտներին կլանելու աշխատաշուկաների կարողությունների ամրապնդումը՝ աշխատանք փնտրելու անմիջական կարողություն ընձեռելով և համայնքներում աշխատանքին համապատասխանող ավելի լավ ծառայություններ մատուցելու միջոցով՝ դրանով իսկ նպաստելով ենթակառուցվածքների զարգացմանը:

Երկրորդ՝ կրթության և ուսուցման հասանելիության բարձրացում՝ մատչելի կրթության, լեզվի և աշխատանքի ուսուցման միջոցով:

Միգրանտների վճարունակ ալիքը սովորաբար տեղակայվում է նպատակակետ երկրում ենթակառուցվածքներով հագեցած համայնքներում և քանի, որ այս առումով գերակշռողը մայրաքաղաքն է անհրաժեշտ է հմտությունների ճանաչման բարելավում՝ օտարերկրյա որակավորումների ճանաչման պարզ, մատչելի և թափանցիկ ընթացակարգեր ընդունելու միջոցով: Աջակցել միգրանտ ձեռնարկատերերին՝ նվազեցնելով նորաստեղծ ձեռնարկությունների համար խոչընդոտները և աջակցություն ցուցաբերելով իրավական խորհրդատվության և ուսուցման միջոցով, հնարավորինս նպաստելով միգրանտների հմտությունների բացահայտմանը, վերջինս ծառայեցնելով ի նպաստ համայնքի աշխատուժի: Մշակել ներածական ծրագիր համայնքներում ինտեգրվելու նպատակով աշխատանքի նախապատրաստում, անհրաժեշտության դեպքում լեզվի ուսուցում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճեմօղլու Տ., Ռոբինսոն Ջ., Ինչու են ձախողվում պետությունները, Երևան, Անտարես, 2018, 688էջ, էջ 112
2. Հովհաննիսյան Ա., Հայաստանը՝ 4-րդ հորիզոնականում. ապագա աշխատառճի ներկան, 2019/1. ԱՄԲԵՐԴ տեղեկագիր
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ. հունվար-նոյեմբեր, էջ 152
4. Курушина Е. В., «Умный» рост: институциональные и ментальные трансформации, Экономика и управление .N 5 (103) 2014, стр.33
5. Based on Chapter 4 of the World Economic Outlook, “The Macroeconomic Effects of Global Migration”, by Philipp Engler, Keiko Honjo, Margaux MacDonald, Roberto Piazza (team leader) and Galen Sher, under the guidance of Florence Jaumotte. https://www.imf.org/en/Blogs/Articles/2020/06/19/blog-weo-chapter4-migration-to-advanced-economies-can-raise-growth
6. David L. Ortmeyer, Michael A. Quinn, Generating Economic Growth in Countries with Migration and Fractionalization, Business and Economics Research Journal, 11/2020, p.1-14 ISSN: 2619-9491

7. Dubovik M. V., Model of smart, sustainable, inclusive economic growth in the context of inequality in Russia, International Journal of Civil Engineering and Technology (IJCIET) Volume 10, Issue 2, February 2019, pp.1704–1711, Article ID: IJCIET_10_02_164, http://www.iaeme.com/ijciet/issues.asp?JType=IJCIET&VType=10&IType=2 ISSN 0976-6308 ©IAEME Publication Scopus Indexed
8. Europe 2020 Strategy for smart, sustainable, and inclusivegrowth. https://ec.europa.eu/digital-agenda/en/news/europe-2020-strategy-smart-sustainable-and-inclusive-growth.
9. Furlanetto F., Robstad O. (2016). Immigration and the macroeconomy: some new empirical evidence. Working Paper. Norges Bank, no. 18. 39 p.
10. Global Economic Prospects, JANUARY 2023, 2023 International Bank for Reconstruction and Development / The World Bank, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/38030/GEP-January-2023.pdf
11. Migration can support economic development if we let it. Here's how, https://www.weforum.org/agenda/2019/03/migration-myths-vs-economic-facts
12. World Economic Forum 2016, "At least one-fifth of people from these countries lives abroad". https:// www.weforum.org/agenda/2016/12/fifth-of-people-from-these-countries-live-abroad/
13. https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---europe/---ro-geneva/---sro-moscow/documents/publication/wcms_807292.pdf
14. https://www.ilo.org/global/about-the-ilo/newsroom/news/WCMS_737053/lang--en/index.htm
15. http://www.cbr.ru/statichtml/file/131869/wp_khab_dec.pdf
16. https://www.norges-bank.no/contentassets/f8b842e9e126460199a34e0434a2f627/working_paper_18_16.pdf?v=03/09/2017123455&ft=.pdf&v=03/09/2017123455&ft=.pdf
17. https://www.oecd.org/migration/OECD%20Migration%20Policy%20Debates%20Numero%202.pdf
18. https://www.hse.ru/news/science/69297044.html
19. https://migration.am/content/pdf/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.2016.arm.pdf

References

1. Atwemo'ghlow T., R'obinson J., Inchow en d'axoghvowm petowt'yownnery', Er&an, Antares, 2018, 688e'j, e'j 112
2. Hovhannisyan A., Hayastany'` 4-rd horizonakanowm. apaga ashxataotwi nerkan, 2019/1. AMBERD teghekagir
3. HH social-tntesakan vitwaky' 2022t'. hownvar-noyember, e'j 152
4. Kurushina E. V., «Umnyj» rost: institucional'nye i mental'nye transformacii, Jekonomika i upravlenie .N 5 (103) 2014, str.33
5. Based on Chapter 4 of the World Economic Outlook, "The Macroeconomic Effects of Global Migration," by Philipp Engler, Keiko Honjo, Margaux MacDonald, Roberto Piazza (team leader) and Galen Sher, under the guidance of Florence Jaumotte.

https://www.imf.org/en/Blogs/Articles/2020/06/19/blog-weo-chapter4-migration-to-advanced-economies-can-raise-growth
6. David L. Ortmeyer, Michael A. Quinn, Generating Economic Growth in Countries with Migration and Fractionalization, Business and Economics Research Journal, 11/2020, p.1-14 ISSN: 2619-9491
7. Dubovik M. V., Model of smart, sustainable, inclusive economic growth in the context of inequality in Russia, International Journal of Civil Engineering and Technology (IJCIET) Volume 10, Issue 2, February 2019, pp.1704–1711, Article ID: IJCIET_10_02_164, http://www.iaeme.com/ijciet/issues.asp?JType=IJCIET&VType=10&IType=2, ISSN 0976-6308 ©IAEME Publication Scopus Indexed
8. Europe 2020 Strategy for smart, sustainable, and inclusivegrowth. https://ec.europa.eu/digital-agenda/en/news/europe-2020-strategy-smart-sustainable-and-inclusive-growth.
9. Furlanetto F., Robstad O. (2016). Immigration and the macroeconomy: some new empirical evidence. Working Paper. Norges Bank, no. 18. 39 p.
10. Global Economic Prospects, JANUARY 2023, 2023 International Bank for Reconstruction and Development / The World Bank, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/38030/GEP-January-2023.pdf
11. Migration can support economic development if we let it. Here's how, https://www.weforum.org/agenda/2019/03/migration-myths-vs-economic-facts
12. World Economic Forum 2016, "At least one-fifth of people from these countries lives abroad". https:// www.weforum.org/agenda/2016/12/fifth-of-people-from-these-countries-live-abroad/
13. https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---europe/---ro-geneva/---sro-moscow/documents/publication/wcms_807292.pdf
14. https://www.ilo.org/global/about-the-ilo/newsroom/news/WCMS_737053/lang--en/index.htm
15. http://www.cbr.ru/statichtml/file/131869/wp_khab_dec.pdf
16. https://www.norges-bank.no/contentassets/f8b842e9e126460199a34e0434a2f627/working_paper_18_16.pdf?v=03/09/2017123455&ft=.pdf&v=03/09/2017123455&ft=.pdf
17. https://www.oecd.org/migration/OECD%20Migration%20Policy%20Debates%20Numero%202.pdf
18. https://www.hse.ru/news/science/69297044.html
19. https://migration.am/content/pdf/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.2016.arm.pdf

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳՐԱՎԱԿԱՆ

Շողեր Պյոտրի Պողոսյան

Համառոտագիր: Յուրաքանչյուր երկրի համար տնտեսական աճը կարևոր նպատակ է, քանի որ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային արդյունքի ավելացումը բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևոր նախապայմանն է:

Համաշխարհային տնտեսությունը շարունակում է զարգանալ զգալի անորոշության պայմաններում, ինչն իր հետքն է թողնում Հայաստանի զարգացումների վրա: Լինելով փոքր և բաց տնտեսություն, Հայաստանը արագ է արձագանքում գործընկեր երկրներից եկող ազդակներին: Դեռևս ոչ լիովին վերականգնելով իր տնտեսական ներուժը արցախյան պատերազմից հետո, Հայաստանը ենթարկվեց մեկ այլ արտաքին ցնցման. Ռուս-ուկրաինական հակամարտությունը մեծ ազդեցություն ունեցավ հիմնական գործընկեր՝ Ռուսաստանի վրա: Արդյունքում, երկրի տնտեսական իրավիճակը նոր բնույթ ստացավ. պատերազմը պատճառ դարձավ զգալի դրամական ներհոսքի՝ շնորհիվ միգրանտների:

ՀՀ-ում տնտեսական աճն ունի յուրահատուկ գծեր, մասնավորապես երկրի տարածքային անհամաչափ զարգացումը, երկարաժամկետ ներդրումների պակասը, արտագաղթը և **իր հերթին նաև միգրանտների ներհոսքը,** ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության արդիականությունը:**

Հետազոտության ***նպատակն*** *է* ուսումնասիրել միգրացիոն հոսքերը՝ տնտեսական աճի, ինչպես նաև համայնքների համաչափ զարգացման տեսանկյունից:

Հետազոտության խնդիրն է ուսումնասիրել միգրացիայի ազդեցությունը ներառական տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, միգրացիոն հոսքերի արդյունավետ կառավարումը, վերլուծումը և համեմատումը, որն էական նշանակություն ունի տարածքների համաչափ զարգացմամբ պայմանավորված միգրանտների հոսքը արդյունավետ կառավարելու տեսանկյունից:

Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են, նկարագրական, համեմատական վերլուծությունների, տնտեսավիճակագրական խմբավորումների մոտեցումները, միգրացիային առնչվող տարեկան զեկույցները, ինչպես նաև միգրացիոն հոսքերը լուսաբանող հեղինակային հրապարակումները:

Գիտական նորույթ: Ներառական տնտեսական աճի ապահովման նպատակով բացահայտվել է միգրացիոն գործընթացների փոփոխությունները, հիմնավորվել միգրացիոն գործընթացների կառավարման արդի մեխանիզմների ներդրումը:

Հիմնավորվել է տնտեսական աճի ապահովման գործում ՀՀ մարզերի մասնակությունը՝ հիմքում դնելով մարզերի սոցիալական աջակցությունից անցում տնտեսական ներդրման մոդելի, միաժամանակ միգրացիոն գործընթացները ծառայեցնելով տնտեսության զարգացմանը:

Բանալի բառեր. ՀՆԱ, միգրացիա, տնտեսական աճ, համաչափ զարգացում, կենսամակարդակ, աշխատուժ, վերապատրաստում, առաջընթաց

МИГРАЦИЯ И ЧЕЛОВЕЧЕСКИЙ КАПИТАЛ - ЗАЛОГ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА

Шогер Петровна Погосян

Аннотация. Экономический рост является важной целью для каждой страны, поскольку увеличение национального продукта на душу населения является важной предпосылкой повышения уровня жизни населения.

Мировая экономика продолжает развиваться в условиях значительной неопределенности, что накладывает свой отпечаток на события в Армении. Будучи небольшой и открытой экономикой, Армения быстро реагирует на импульсы стран-партнеров. Еще не полностью восстановив свой экономический потенциал после Арцахской войны, Армения подверглась очередному внешнему потрясению. Российско-украинский конфликт оказал большое влияние на главного партнера - Россию. В результате, экономическая ситуация в стране приобрела новый характер. Война вызвала значительный приток денег благодаря мигрантам.

Экономический рост в РА имеет уникальные черты, в частности, неравномерность территориального развития страны, отсутствие долгосрочных инвестиций, эмиграцию, и, в свою очередь, также приток мигрантов, что обуславливает **современность** нашего исследования.

Целью исследования является изучение миграционных потоков с точки зрения экономического роста, а также сбалансированного развития сообществ.

Задачей исследования является изучение влияния миграции с точки зрения обеспечения инклюзивного экономического роста, эффективного управления, анализа и сопоставления миграционных потоков, что имеет существенное значение с точки зрения эффективного управления потоком мигрантов за счет сбалансированного развития территорий. **Для сбора информации** использовались описательный, сравнительный анализ, подходы статистической группировки, годовые отчеты, связанные с миграцией (а также миграционными потоками) и авторские публикации.

Научная новизна. В целях обеспечения инклюзивного экономического роста выявлены изменения миграционных процессов, обосновано внедрение современных механизмов управления миграционными процессами.

Способствовать участию регионов РА в обеспечении экономического роста с перехода от социальной поддержки регионов к экономическим инвестициям, ставя миграционные процессы на службу развития внештатной экономики.

Ключевые слова: ВВП, миграция, экономический рост, сбалансированное развитие, средний уровень, рабочая сила, обучение, прогресс

MIGRATION AND HUMAN CAPITAL: A GUARANTEE OF ECONOMIC GROWTH

Shogher Pyotr Poghosyan

Abstract. Economic growth is the aim of every country, as the increase of the national output per capita is an important prerequisite for raising the standard of living of the society.

The World economy continues to develop in the conditions of considerable uncertainty, which leaves its mark on the developments in Armenia. Being a small and open economy country, Armenia quickly responds to impulses from partner countries. Still not fully recovered its economic potential after the Artsakh war, Armenia was subjected to another external shock. The Russian-Ukrainian conflict had a great impact on the main economic partner of Armenia - Russia. As a result, the country's economic situation took on a new characteristic. Thanks to migrants the war caused a significant influx of money.

The economic growth in RA has unique features, in particular, the uneven territorial development of the country, the lack of long-term investments, emigration and, in turn, also the inflow of migrants, which conditions **the relevance of our research**.

The **purpose** of the research is to study migration flows from the point of view of economic growth as well as balanced development of communities.

The **aim** of the research is to examine the impact of migration from the point of view of ensuring inclusive economic growth, the effective management, analysis and comparison of migration flows, which is essential for understanding the responses of migrants to changes in the labor market, as well as for the balanced development of communities.

For **the collection of data**, descriptive, comparative analysis, statistical grouping approaches, analyses of annual reports related to migration, as well as publications exploring migration flows were used.

Scientific novelty: In order to ensure inclusive economic growth, the changes in the migration processes were identified, and the introduction of modern migration processes management mechanisms was justified.

The participation of the RA regions in ensuring economic growth was substantiated through the transition from social support of the regions to the model of economic investments, at the same time directing migration processes to the development of the economy.

Keywords: GDP, migration, economic growth, balanced development, middle level, labor, training, progress.